

ված գիտնականների առաջ, այն է՝ երկրային և երկնային ջրերն այնպես ռացիոնալ տեղաբաշխել մեր մոլորակի վրա, որ մարդիկ, կենդանիներն ու բույսերը չզգան նրա պակասը:

Դարեր շարունակ այն կարծիքն է եղել, թե ջրի ցիկլը անթերի կերպով կարգավորվել է ակունքից-ակունք. ջուրն անցել է առվակներով ու գետերով, գոլորշիանալով բարձրացել է վեր, այնուհետև թափվել անձրևի ու ձյան տեսքով և այսպես շարունակ: Ամեն ինչ պարզ էր, և մենք բավականանում էինք այն աներկբայելի ճշմարտությամբ, որ բնության մեջ ոչինչ չի կորչում:

Իսկ այժմ հայտնի է, որ ամեն օր երկրային ջրի և օդի որոշակի մասն անհետանում և ընդմիշտ կորչում է տարածության մեջ: Այս «հոսակորուստն» այնքան վզալի է, որ ամերիկյան գիտնական Զ. Զիլվերին պնդում է, թե իր գոյության սկզբնական շրջանից մինչև հիմա մեր մոլորակը շրջապատող օվկիանոսներից ու մթնոլորտից մի մոլեկուլ անգամ չի մնացել: Այստեղից հարց է ծագում. բավական է արդյոք այն ջուրը, որ «արտադրում է» Երկիրը՝ այդ «հոսակորուստը» ծածկելու համար:

Սովետական պրոֆեսոր Վ. Բելոուսովը գտնում է, որ երկրագնդի խորքից բարձրացող շիկացած բազալտից անջատվում է գրանիտ, որի ընթացքում արտադրվում է հսկայական քանակությամբ ջուր:

Իսկ արդյո՞ք Երկրի ամբողջ քաղցրահամ ջուրն է պիտանի խմելու համար: Ո՛չ: Եթե այդպես լիներ, ապա այսօր անհանգստանալու ոչ մի պատճառ չէր լինի: Արդյունաբերության անընդհատ աճի հետևանքով տարեցտարի ոչ միայն ավելանում է ջրի սպառումը, այլև գետերն է լցվում օգտագործված և կեղտոտված ջուրը:

Կեղտոտման դեմ պայքարելու հետ մեկտեղ հիդրոլոգները բոլոր միջոցներով որոնում են ջրամատակարարման նոր աղբյուրներ: Արհեստական անձրևները, խորքային ջրերը, լողացող սառցալեռները և նույնիսկ ծովային ջրի աղալրվումը — այս բոլոր «բնական ռեզերվները» լրջորեն հետաքրքրում են գիտնականներին:

ԺԱՆ ՎԻԴԱԼ

ՏԵՏՐԱՑԻԿԼԻՆ ԱՆՏԻԲԻՈՏԻԿԸ ԵՎ
ԱՏԱՄԻ ԷՄԱԼԻ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԸ

Ատամնաբուժական հետազոտությունների՝ ալգային ինստիտուտի (ԱՄՆ) գիտաշխատողները «Ջոռնել օֆ Ամերիկեն մեդիկալ ասոցիեյշն» ժուռնալում գրել են, որ տետրացիկլին անտիբիոտիկի կիրառումը, ըստ երևույթին, երեխաների կաթնատամների էմալի վնասվածքների առաջացման ռիսկական պատճառն է:

Տետրացիկլինը կարող է ազդել նաև հիմնական առամների վրա: Վնասվածքները մեծ մասամբ երևան են գալիս դեղին կամ գորշ բծերի ձևով, բայց որոշ դեպքերում առաջ է գալիս էմալի վարգացման էական թերություն: Հոդվածի հեղինակները նշում են, որ այդ թերությունների երեվան գալու հաճախականությունը մեծանում է:

1963 թ. փետրվարից առաջ ընկած 6-ամսյա ժամանակամիջոցում հոդվածի հեղինակները ուսումնասիրել են 2,5-ից մինչև 7 տարեկան 17 երեխաների, որոնց առամների էմալը տետրացիկլինի օգտագործման հետևանքով գունավորվել էր կամ թերպարզացած էր:

Վնասվածքների վարգացումն ընդհատվել է առամների այն տեղերում, որոնք աճել են տետրացիկլին օգտագործելու ժամանակ:

Հեղինակները նշում են, որ այդ նույն 6-ամսյա ժամանակամիջոցում նրանք միայն 7 երեխաների մոտ են դիտել առամների վնասվածքներ, որոնք առաջացել են ժառանգական երեք հազվադեպ հիվանդությունների հետևանքով:

Պատահականորեն ընտրված 100 երեխաների առամները ստուգելիս 45 տոկոսի մոտ հայտնաբերվել են տետրացիկլինի ազդման հետևանքներ, որոնք առանձին դեպքերում անկատելի են անվեն աչքի համար: